«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 134-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«.....» ..... 2023 թվականի N ...-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 134-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի քննարկման կարգը, ժամանակավոր կացության քարտի, մշտական կացության քարտի և Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի նկարագրերը և ձևերը հաստատելու մասին» N 134-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշմամբ հաստատված N 1 և 2 հավելվածներում «Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն (այսուհետ՝ անձնագրային և վիզաների վարչություն)» բառերը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն)» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով, իսկ «անձնագրային և վիզաների վարչություն» բառերը և դրա համապատասխան հոլովաձևերը՝ «Ծառայություն» բառով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

2) Որոշման N 1 հավելվածի 1-ին կետում «երկարաձգելու» բառից հետո լրացնել «՝ էլեկտրոնային հարթակով դիմելու» բառերով.

3) Որոշման N 1 հավելվածի 1-ին կետը լրացնել նոր՝ 4.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1 Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու հանգամանքը պարզելու անհրաժեշտության դեպքում ներկայացվում են նաև դիմումատուի ծննդյան վկայականի, ծնողների անձնագրերի և ծնողների ամուսնության վկայականի պատճենները.»։

4) Որոշման N 2 հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ նոր խմբագրությամբ.

«2. Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու հարցը լիազոր մարմինը համաձայնեցնում է Ազգային անվտանգության ծառայության հետ՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով Ազգային անվտանգություն ծառայություն ուղարկելով օտարերկրացու անձնագրի և կացության կարգավիճակի տրման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները, իսկ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանող օտարերկրացիների դեպքում՝ միայն ցուցակները՝ կցելով իր կողմից Ներքին գործերի նախարարությունում գործող համակարգերով իրականացված ստուգումների արդյունքում դիմումատուի վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունները։»։

5) Որոշման N 2 հավելվածի 6-րդ կետում «քարտ» բառից հետո լրացնել «՝վավեր անձնագրի հիման վրա։» բառերը։

6) Որոշման N 2 հավելվածի 4-րդ կետում «բողոքարկել» բառից հետո լրացնել «վարչական կամ» բառերը։

7) Որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում «վարչություն» բառը փոխարինել «Ծառայություն» բառով.

8) Որոշմամբ հաստատված N 5 հավելվածում «Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն (այսուհետ՝ վարչություն)» բառերը փոխարինել «Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն)» բառերով, «վարչություն» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը՝ «Ծառայություն» բառով, իսկ «Ոստիկանություն» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը՝ «Ներքին գործերի նախարարություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ք. Երևան